

ՍԻՄԷՈՆ ԳՊՐԻ ԼԵՀԱՅԻՆՑ

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԵԱՆ Ի ԼՎՈՎԷ Ի Կ. ՊՈԼԻՍ, Ի ՀՈՍՄ, Ի ՄՈՒՇ ԵՆ ՅԵՐՈՒՍԱԿԷՄ ՅԱՄՍՆ 1608—1619:

ՅԱՆԵԼՈՒՄ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՅՔ Ի ԼԵՀՍ (1621—1635)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԵՆ ԲՆԱԳԻՐ

Ի Լեմբերգ, ուր դացած էի տարւոյս յունիս 19ին երկու շաբաթով, ուսումնասիրելու Լեհաստանի հնուածիւնները, ու շարունակելու գրական համարարանի Մատենադարանին Թ. 58 հայերէն ձեռագիրը, որ կը ներկայացնէր Սիմէոն դպրի ինքնագիր ուղեգրութիւնը ԺԵ. դարու առաջին քառորդէն:

F. Macler<sup>1</sup> որ տեսած էր զայն 1925ին, բաւականացած էր յիշատակութեամբ միայն՝ «texte qui semble être un récit de voyage (?)», այսպէս հարցականով, առանց վերլուծելու անոր կարեւոր բովանդակութիւնը:

Որովհետեւ կարճ էր ժամանակ արտագրելու համար ամբողջ ձեռագիրը, խնդրեցի Համարարանին Վարչութեանէն, որ հաճի երկարագոյն ժամանակով դնել զայն իմ արտագրութեանս տակ ի Վիեննա: Կը յայտնեմ այստեղ հրատարակու իմ շնորհակալութիւնս նոյն Մատենադարանի Վարչութեան, որ յանձն առաւ միջնորդութեամբ Վիեննայի Ազգային Մատենադարանին ուղարկել ինձ պատուական Ձեռագիրս:

Կը կանխեմ ներկայացնել այս տեղ Ձեռագրիս նկարագրութիւնը, որ է հետեւեալը.

ՁԵՌԱԳԻՐԸ

Թուղթք՝ 198 (= 396 էջ): Մեծութիւն՝ 15,3 x 10 սմ.: Գրչութիւն՝ 12 x 7,2 սմ.: Տողք՝ 24: Նիւթ՝ թուղթ: Կազմ՝ կաշի բաց կարմիր գունով: Գիր՝ նոսր մէտ շղագրի: Հանգամանք՝ լաւ: Դատարկ թուղթեր՝ էջ 206, 289 (կէս էջէն) մինչեւ 396. երկու դատարկ թուղթ նաեւ սկիզբն եւ վերջը իբրեւ պահպանակ գրուած: Խորան, զարդագիր եւն չունի: Գրուած է միահետ գրչութեամբ. հատուածներու սկզբնատուերը, կ'երեւայ կարմրագիր գրելու համար, թողուած են ան-

<sup>1</sup> Rapport sur une mission scientifique en Galicie et en Bukovine (juillet-août 1925). Revue des Études arméniennes, t. VII (1927), p. 126—127.

գիր: Գրիչ եւ Տէր՝ հեղինակը Սիմէոն դպրի Լեհացի (Չամոսցացի): Տեղի՝ հաւանորէն Լվով: Ժամանակ՝ 1635էն քիչ յետոյ:

Ձեռագիրս կը պահուի այժմ Լվովի Համարարանի Մատենադարանին մէջ, ի շարս հայերէն ձեռագիրներու եւ կը կրէ 58 համարը:

ՀԵՂԻՆԱԿԸ

Իւր կենսագրութեան համար ակնարկութիւններ ունի ինքնին հեղինակը Ուղեգրութեանս նախարանին մէջ եւ այլ եւ այլ օրինակութիւններու յիշատակարաններու մէջ:

Իւր ծնողքը՝ մահտեսի Մարտիրոս եւ Դուլաթ Խաթուն հայրենեօք Կաֆայի են<sup>2</sup>: ԺՁ. դարու երկրորդ կէսին հանդերձ ազգականօք կը գաղթեն Կաֆայէն եւ կու գան կը հաստատուին ի նորաչէն գիւղաքաղաքն Չամոսցա: Տեղափոխութեան ճիշդ թուականը յայտնի չէ. տեղի ունեցած ըլլալու է այն իւր 1580ին:

Մարտիրոս կ'ունենայ 4 զաւակ, երկու մանչ՝ Յովհաննէս եւ Սիմէոն, եւ երկու աղջիկ՝ ձուհար եւ Հոնիփսիմէ<sup>3</sup>: Տիկին Դուլաթ († իւր 1586) եւ անոր զաւակը՝ Յովհաննէս († 1608էն յառաջ) վաղամեռիկ կ'ըլլան: Մահտեսի Մարտիրոս կ'երեւայ թէ մեռած է 1605ի մօտերը: Իսկ դուստրը՝ ձուհար կը վախճանի 1612ին:

Սիմէոնի ծնունդը կ'իյնայ 1584ին. նա ինք զինքը 1608ին 24 տարեկան հասակի մէջ գրեմ է: Երբ վախճանեցաւ մայրը՝ տակաւին տխրեց տարիքի մէջ էր Սիմէոն. իւր մեծ քոյրը՝ ձուհար փոխանակ մօրը կ'ըլլայ իրեն եւ կը հասցնէ զինքը ողջանդամ հասուն հասակին: 1612ին, երբ Վենետիկ կը գտնուէր Սիմէոն, կ'ընդունի Վանեցի վաճառականէ մը տխուր գոյժը, թէ վախճանած է մեծ քոյրը. այս առթիւ կ'արձանագրէ Սիմէոն իւր յուշատետրին մէջ ողբախառն տողերս. «ով

<sup>2</sup> «Մնօղքն իմ բնական յաշխարհէն Հոնաց ի տիրանամ եւ աստուածապահ ծովահայեաց քաղաքէն Կաֆայու. պանդուխտ գոլով եկեալ բնակեցան քրիստոնէից երկիրն ի գաւառն Բոզաց որ այժմ տիրեն Լէհաք, ի նորաչէն գիւղաքաղաքն Չամոսցա» (Ձ. էջ 1):

<sup>3</sup> Իւր մէկ յիշատակարանին մէջ 1609ին ողորմիս կը խնդրէ Սիմէոն իւրայիններուն համար՝ «ծնողաց իմոց ննջեցելոց մահտեսի Մարտիրոսին եւ մօրս Դուլաթ Խաթունին եւ եղբորս Յովհաննիսի, եւ բնեցս որ են ի մարմնի՝ ձուհարին եւ Հոնիփսիմէի եւ մեկնացն ազատութիւն» (տե՛ս վարը): Իսկ 1619ին կը յայտնէ թէ «ունէի երկու քոյր եւ քեռորդիք եւ այլ յորով ազգականք (Ձ. էջ 350. հմտ. նաեւ էջ 95):

բարերար իմ, ով երախտաւոր իմ, ով սիրեցեալը իմ, ով աշխատաւոր իմ, ով քոյր իմ եւ մայր, քանզի զմայր սակաւ գիտացի» (Ձ. էջ 187):

Հայրը՝ մահտեսի Մարտիրոս ամէն ինամք կը տանի իւր զաւակին կըթութեան համար. այս նկատմամբ կը գրէ Սիմէոն. «Բայց զիս տվեալ յուսումնս գրոց, որում հասու եղեալ ի մանկութենէ մինչ ի չափ հասակի հասեալ զեղբերեալ եւ մարդեալ ի վարձարանս ջահաստանի առ ոտս վարդապետաց եւ բանասիրաց» (Ձ. էջ 1—2):

Սիմէոն կ'ընտրէ եկեղեցական կոչումը. կ'ընդունի չորս փոքր աստիճանները, որով կը յորջորջուի դպիր, նաեւ սարկաւազ:

Երբ նա տակաւին ուսման անձնատուր էր, կը վախճանի իւր հայրը (1605<sup>4</sup>): Քոյրերը ամուսնացած էին արդէն: Սիմէոն ժառանգ կ'ըլլայ հօրը ստացուած քննութիւն. 1619ին կը գրէր թէ «ունէի (ի Չամոսցա) ... դժայրենի տունս եւ զբնակութիւնս, գտաացուածս եւ դայլս» (Ձ. 350):

Հայրենի ժառանգութեան անտեսութիւնը չի հետաքրքրել զինքը. եւ ոչ հայրենի օջախը, որ իրմով վառ պիտի մնար: Կը սիրէր ընթերցանութիւնը եւ հպարտ էր որ գիրքեր կարդալ եւ գրել: Ուսած էր վայելուչ տէր կարգալ եւ գրել: Ուսած էր վայելուչ նոտրագիր: Իր սիրած ընթերցանութեան զրքերն էին Վարք Հարանց, Յայտաւորք եւ պատմագրեր՝ յանուանէ Միքայէլ Ասորի, Թովմաս Մեծոփեցի եւն: Ունէր գեղեցիկ մտլութիւնը հաւաքելու գրքեր. նոյն իսկ երկար ճանապարհի վրայ ունէր իւր հետը «ճամատանով գրեանք», որոնք երբ 1612ին ի Չմիւռնիս վտանգի մատնուեցան «յոյժ արտում եւ տխուր» կը թողուն զինքը, «զի դայլ ինչ այնպէս չհոգայի, կ'ըսէ, որպէս գրեանքս» (Ձ. 192):

Տեսայ ի Լվով Հայկական ցուցահանդիսի մէջ Գանձարան-Տաղարան մը, որ ունէր Սիմէոնի գրչէն հետեւեալ յիշատակագրութիւնը (գրչութեան տեղն անյայտ). «Արդ ի թվ. (գրչութեան տեղն անյայտ) թվ. (1606) ապրիլ է. ի թագաւորութեան Լեհաց երրորդ Չիկիմունտին, ի կաթողիկոսութեանս տէր Մելքիսեթի եւ առաջնորդութեանս այսմ նահանգիս տէր Կարապետ վարդապետի, եւ անպիտան եւ յանարժան Սիմէոն դպիրս վերջին ստացողս պատվական մէտն գպիրս վերջին ստացողս պատվական գրգիս, որ է Գանձատար եւ տաղեր: Եւ զնեցի զսա ի հալալ ընչից եւ յարդար վաս-

տակոցս, յիշատակ ինձ եւ իմ ծնողացս, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ. ամէն»:

Թէեւ չենք գիտեր ճշդիւ ո՛ր տարին, բայց կը թողու Սիմէոն իւր հայրենի տունն ի Չամոսցա եւ կը հասնի Լվով: Ի վաղուց հետէ կը տանջէր զինքը փափագը երթալ ուխտապանութեամբ հեռուոր սրբավայրեր: Այս մասին թող խօսի ինքը. «Երբեմն ընթերցեալ իմ զՎարս հարանց եւ զՊատմութիւնս վիւրսանաց, անկաւ ի սիրտ իմ փափագ եւ ջերմ սէր... ի բազում ամաց եւ ի վաղուց հետէ... շրջագայել եւ տարաշխարհիկ լինել յօտար եւ յանձանօթ զաւառս եւ ի սփիւռս հեթանոսաց. այլ եւ ուխտիւ զնալ նախ յաստուածակոյս քաղաքն ի սուրբ Երուսաղէմ... եւ անտի զնալ ի Մուշ... եւ ապա ի մեծն Հոռմ»:

Ի վաղուց իւր մէջ սնուցած այս փափագը կը ձեռնարկէ իրականացնել երբ կը հասնի իւր քսանուշորորդ հասակին: Առոյգ երիտասարդական հասակս կը սիրէ բախտախնդիր ձեռնարկութիւններ: Տակաւին չէր ամուսնացած Սիմէոն, չունէր ընտանեկան որ եւ իցէ կապ, որ կաշկանդէր զինքը տունը: Հայրենի ստացուածները կու տայ վարձու. եւ վստահ իւր գրագիտութեան վրայ կ'առնէ պանդխտութեան ցուպը թափառելու իբրեւ ուխտաւոր աշխարհէ աշխարհ:

«Արդ ի թվին Հայոց ՌԾԷ (1608) փետրուարի ԺԵ. աղուհացից յերկրորդում շաբաթի օրն Երկուշաբաթի<sup>5</sup>, կամօքն եւ զօրութեամբ ամենակարօղին Աստուծոյ եւ ապալինեալ ի Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ ելի ի Լովայ մայրաքաղաքէն՝ լեալ արմազ ԻԴից. եւ մտայ ես ի ճանապարհ» (էջ 4):

Ճանապարհը կը հանէ զինքը Մուշուս, ուր կը յուսար խառնուել զէպի Կ. Պոլիս գալու կարաւանի մը. մտադիր էր Կ. Պոլսէն ցող կարաւանի մը կցուելով Երուսաղէմ: Երկու ամիս եւ նաւով մեկնել Երուսաղէմ: Երկու ամիս եւ երկու շաբաթ կը ստիպուի սպասել ի Մուշուս: Դէպի Կ. Պոլիս ուղեւորող արքունի կանձատար կարաւանի մը կցուելով Երուսաղէմ կը հասնի նոյն տարւոյն Սեպտեմբեր 10ին սուլթաններու քաղաքը:

<sup>4</sup> 1608ին Չատիկը կ'իյնայ ըստ Հին տոմարին Մարտ 27ին. ուստի եւ Աղուհացից Բ. շաբաթ ճշդիւ փետրուար 15 Գ. է եւ ոչ Բ. է: Սիմէոնի յիշողութիւնը կ'երեւայ թէ գաւաճանած է հոս: Եւ կամ նկատի ունի նոր տոմարը, որ այս տարի նահանջ էր. եւ փետր. 15 ճշդիւ Բ. է կու տար:







ներ, որոնք կրտսեր են ժամանակով եւ նոյնպէս փոքրիկ շրջան մը միայն նկատի ունին:

Անոնք ոչ իրենց աշխարհայեացքով եւ ոչ բազմաշրջութեամբ կրնան հեռուէն անգամ մը քակից ներկայանալ Սիմէոնի:

Արդէն երկար ուղեգիծը՝ Լվով—Կ. Պոլիս—Չմիւտնիս—Կ. Պոլիս—Վենետիկ—Հոռոմ—Մուշ—Կ. Պոլիս—Գահիրէ—Երուսաղէմ—Հալէպ—Կ. Պոլիս—Լվով. եւ ժամանակը՝ 1608—1619 բաւական են համոզելու զմեզ, թէ Սիմէոն ունի շատ բան պատմելու մեզի իւր շատաշրջիկ կեանքէն եւ ապրումներէն:

Ոչ միայն աշխարհը, այլ եւ ժողովուրդը հետաքրքրած են զինքը, զննալայրերն եւ ժողովուրդներու կենցաղը: Եւ որովհետեւ հայ մարդ է արեամբ եւ զգածուամով, ամէնէն առաջ հայ ժողովուրդը փնտռած է իւր ճանապարհին վրայ: Ժամանակը, երբ իւր ուղեւորութիւնը կը կատարէ Սիմէոն, հայ զաղթական կեանքի պատմական մէկ րոպէն է. մայր երկիրը լքած՝ օտար երկրքի տակ իւր հանգիստը կը փնտռէ հայ ժողովուրդը. նոր գաղթաւայրեր կը հաստատուին ամենուրեք: Յատկապէս այս տեսակէտով կը ստանան ուղեւորին հաղորդագրութիւնները կարեւորութիւն:

Սիմէոնի քրտսեր գրութեցի, չէ շահագրգռուած տեղական պայմաններով. չէ եղած միջամուխ ազգային—եկեղեցական—քաղաքական խնդիրներու մէջ. նա նկատած է Ազգն ընդհանրապէս եւ անոր ապրելակերպը, քրիստոնէութիւնն առհասարակ եւ անոր մշակոյթը: Կը հետաքրքրուի տեղագրութեամբ եւ զննալայրերով, բայց նաեւ իւրաքանչիւր երկրի եւ քաղաքի արգիւնաբերութեամբ:

Ժամանակակից կեանքի նկարագրութեան մէջ ճոխադոյն է Գրիգոր Դարանաղեցի, որուն նպատակն է ժամանակագրութիւն գրել. Սիմէոն ուղեգիր է, կ'արձանագրէ տեսածները միայն, առարկայօրէն: Ինչ որ վրիպած է Դարանաղեցոյ ուշագրութենէն, հազորգած է Լեհացին: Ըմբռնելու համար ժամանակին հանգամանքները, անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ երկու հեղինակներս ալ:

Սիմէոն ուզած է իւր ուղեգրութեամբը ուղեցոյց մը տալ այն ուխտաւորներու ձեռքը, որոնք կը փափագին Երբեք ընթանալ իւր քայլերով: Ուղած է բաժին հանել անոնց իւր փորձառութենէն: Այս նպատակով ալ մանրամասն կը նշանակէ ճանապարհներու հե-

ռաւորութիւնը, քաղաքներու երեւելի սրբավայրերը, նշանաւոր շինուածքները, նաեւ ժողովուրդներու վարք ու բարքէն եւ նիստ ու կացէն ուշագրաւ եւ զգուշալի գիծեր:

Երկար յամած է կարեւոր կենդրոններու մէջ, այսպէս Կ. Պոլսոյ, Վենետիկի, Հոռոմի, Գահիրէի, Երուսաղէմի, Լվովի նկարագրութիւնը տուած է շատ մանրամասն, որոնք հետաքրքրական են նաեւ այսօրուան ընթերցողին համար:

Նկատի առնելով Ուղեգրութեանս այս ամէն առաւելութիւնները, անհրաժեշտ համարեցայ ամբողջութեամբ հրատարակել զայն:

Հեղինակը թէպէտ կը պարծի թէ՛ անած է իւր կրթութիւնը «ի վարժարանս ջահաստանի առ ոտս վարդապետաց եւ բանասիրաց», բայց շատ թերաւարժ է ուղղախօսութեան մէջ: Կը գրէ գրաբարախառն ուսուցիչներ: Ականջը լաւ չէ ընդունած հայերէնի նուրբ ձայները: Այս պատճառաւ ալ գործած է անթիւ ուղղագրական, նաեւ քերականական սխալներ: Առ հասարակ շատ զգալի է իր գրչին տակ գրաբարի եւ աշխարհաբարի կոիւր: Որպէս զի միօրինակ ըլլայ ուղղագրութիւնը, եւ ընթերցանութիւնը չխանգարի քերականական ծանր սպառումներէ, կարեւոր գատեցի ուղղել անճշգրտութիւնները: Ձեռագրին ընթերցուածները ներկայացուած են ստորին լուսանցքի վրայ:

Հեղինակը միահեռ գրած էր իւր ուղեգրութիւնը. առանց որ եւ է գրուիներու բաժանման: Որպէս զի զիւրին ըլլայ աշխատութեանս գործածութիւնը, հարկ տեսայ զնել կարեւոր տեղեր խոստարանութիւններ:

Չուզեցի ծանրաբեռնել էջերը երկար ծանօթութիւններով: Ինչ ինչ կէտերու լուսարանութիւնը կը թողում գրութեանս վերջը: Այն տեղ պիտի գտնեն ընթերցողները նաեւ օտար բառերու բառացանկը:

ՍԻՄԷՈՆ ԳՊՐԻ ԼԵՀԵՑԻՈՅ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

1. ՄՈՒՏԻՐ

Ես մեղաւոր եւ անարժան, բիւր քանքարոյ պարտական, ծառայ չար եւ ապիրատի հրամանս Տեսուն Աստուծոյ իմոյ, այլ եւ հուսկ եւ յետին եւ տրուպս յամենայն աստիճանաւորաց, կոչեցեալ զպիր՝ որ է չորս

2 յապիրատ:

5

աստիճան, բայց զործովս հեռի եւ մեկուսի, Սիմէոն անուն որդի Մարտիրոսի: Ծնողքն իմ բնական յաշխարհէն Հոռոմ, ի տիրախնամ եւ աստուածապաշ ծովահայեաց քաղաքէն Գաֆայու, պանդուխտ գոլով եկեալ ընակեցան ի քրիստոնէից երկիրն՝ ի դաւառն Ընդաց, որ այժմ տիրեն Լէհք, ի նորաչէն գիւղաքաղաքն Չամոսցա: Թողեալ զմեզ նչլեհ եւ ինքեանք փոխեցան յանանց կեանսն, առ յոյսն ամենեցուն Բրիտոսս:

Բայց զիս տվեալ յուսումնս զորոց, որում հասու եղեալ ի մանկութենէ մինչ ի չափ հասակի հասեալ՝ դեպերեալ եւ մարդեալ ի վարժարանս ջահաստանի առ ոտս վարդապետաց Եւ բանասիրաց: Եւ երբեմն ընթերցեալ իմ զՎարս հարանց եւ զՊատմութիւնս վիպասանաց, անկաւ ի սիրտ իմ փափագ եւ ջերմ սէր, ըստ այնմ թէ «Ձեռաւ սիրտ իմ ի փորի իմում, եւ ի խորհուրդս իմ վառեցաւ հուր», ի բազում ամաց եւ ի վաղուց հետէ. վասն որոյ եւ տոչորէր սիրտ իմ, զալարէին աղիք իմ միշտ եւ հանապաղ, չըջագայիլ եւ տարաշխարհիկ լինել յօտար եւ յանձնօթ զաւառան Երուսաղէմ՝ յերկրպագութիւն լուսարուխ սուրբ գերեզմանին Բրիտոսսի եւ այլոց սուրբ անօրինականացն որ անդ: Եւ անտի զնալ ի Մուշ, ուր նշխարքն է սրբոյն Յովհաննու Մկրտչի. եւ ապա ի մեծն Հոռոմ, ի սուրբ գերեզմանն Պետրոսի եւ Պողոսի եւ այլ յոք գերեզմանս արեամբ ներկեալ նախուժք եւ բազմահաւաք արեամբ ներկեալ վիպայցն: Եւ վասն այսմ բարի մտասուրբ վիպայցն: Եւ վասն այսմ բարի մտածութեանս յոգոց հանեալ միշտ հառաջամբ 40 աղաչէի զինդրակատարն Աստուած՝ զտուիչն ամենայն բարեաց եւ կատարելն ամենայն խնդրուածոց, զլսողն աղօթից, զի տացէ ինձ ըստ սրտի իմում. եւ ցուցցէ ինձ զճանապարհ յոր եւ զնացից, հասուցանել զիս այս 45 հոգեւոր եւ աստուածային բազմանացս:

Չոր եւ բազմագութ, ողորմած եւ մարդասէրն Աստուած, որ տալ ամենայնի առաւելս եւ ոչ նախատէ, ըստ Յակոբու առաւելոյ, այլ եւ ընու ամենեցուն զփափագն 50 առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք. որ եւ ինքն իւր ամենասուրբ բերանովս հրա-

10 պանտուխտ: — 14 ինքեանք: — 19 ջահաստանի յոտս: — 20 ընթերցեալ: — 37 յարեամբ: — 39 հառաջամբ: — 44 յայս: — 45 յաստուածային: — 51 ինքն յիւր:

մայեաց, թէ Չամենայն զոր ինչ խնդրէք ի անուն իմ, ի հօրէ տաց ձեզ: Եւ դարձեալ թէ Ամենայն որ խնդրէ անու եւ որ հայցէ դատնէ, եւ այլն: Նոյն անարգամեծար Տէրն, որ ոչ դարչի ի մեղաւորաց, ոչ հայեցաւ յոր ոչ դարչի ի անթիւ զազիր նօրէնութիւն իմ, այլ եւ ի անթիւ զազիր սղալանս իմ: Արդ լուաւ աղօթից իմոց եւ զինդրուածս իմ ընկալաւ. եւ առաջնորդեաց ինձ ի շաւիղս ուղիղս. եւ ի ճանապարհս արգարութեան վասն անուան իւրոյ, ըստ անսուտ խոստման իւրոյ. որում փառք, պատիւ եւ երկրպագութիւն, անդադար զոհացողական փառաւորութեամբ յամենայն արարածոց նաեւ յիմ մեղապարտ յանձնէս, քանի եմ եւ եղեց եւ մինչեւ ցելս շնչոյ իմոյ. ամէն:

2. ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ Ի ԼՈՎԱՅ ՄԻՆՉԵՒ ՅԿՈՍԱՆՆՈՒՊՈԼԻՍ

Արդ ի թվին Հայոց ՌԾԷ, Փետրուարի ԺԵ, աղուհացից յերկրորդում շարաթի՝ օրն երկուշաբթի, կամօք եւ զօրութեամբ ամենակարօղին Աստուծոյ, ապաւինեալ ի Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ, ելի ի ԼՈՎԱՅ մայրաքաղաքէն, լեալ ամաց քսան եւ չորից: Եւ մտալ ես ի ճանապարհ հետ Պուղտանցոց Հայոց վաճառականաց: Եւ զի ձմեռն էր՝ ատան օրն հաղիւ հասաք ի ՄԻՆԱՍԻՆ քաղաք, որ է սինօս եւ վերջ Լեհաց երկրին 10 եւ մուտ Օլախաց երկրին: Կացաք անդ օր մի: Եւ անտի ինն օրն եկաք ի աստուածաչէն քաղաքն ՍէջՈՎ, որ էր թախտ Պուղտանաց պարտնաց եւ աթոռ հայրապետի Հայոց եւ Օլախաց: Եւ այս Սէջովս էր ի յոյժ բարձրաւանդակ տեղով, քաղցրահայեաց եւ վայելուչ, բարեխառն եւ առողջարար օդով: Եւ ջուր մեծ երթայր շուրջ զքաղաքան: Եւ կայր յայս քաղաքս երեք շորս հարիւր տուն հայի. երեք քարաչէն եկեղեցի եւ երկու վանք 20 վիմաչէն քաղաքէն ի զուրս, յոյժ գեղեցիկ եւ պատվական. մինն մերձ եւ հուպ քաղաքին, միւսն երկու մզոն հեռի: Եւ էր անդ եպիսկոպոս մի երկրցի՝ Յովհաննէս անուն, եւ վարդապետ մի Հիզանցի՝ Մկրտիչ անուն, եւ վարդապետ մի այլ Մեսրոբ անուն: Եւ ժողովուրդ քաղաքին էր խիստ հիւրասէր, երկիւղածք Աստուծոյ եւ մարդասէրք: Կացի

55 յանարգամեծար: — 62 յորում: — 66 եղեց: — 16 բարձրաւանդակ: — 17 յօղով: — 19 երեք դձ: — 21 ոյժ:

առ նոսա երեք ամիս եւ երկու շաբաթ յազազ ընկերաց :

Ապա լուայ զի խաղնայ տանէին Օլախայ երկրէն թուրքին խօնթքարին ի Ստրմալու : Եւ խնդութեամբ չուեալ երեք օրն հասայ ԵԱՇ ՊԱՉԱՐՆ. եւ կացի անդ ամիս մի, մինչեւ ելնէ խաղնան : Եւ կայր Եաշն երկու հարիւր տուն Հայի՝ եկաց եւ բնակաց. եւ փառաւոր եկեղեցի մի քարէ. եւ իմաստուն քահանայք եւ պերճ տօլլաթաւորք :

Եւ Աստուածածնայ պահոցն երկուշաբթին ելլի հետ խաղնային : Եւ խաղնատարքն էին Հայք, եաչցիք՝ խոճայ Յովհաննէս Կերոնեց եւ Ալրամի որդին խոճայ Պաշիկին : Բայց Աստուած այլազ առնէ Պաշիկին եւ վարձահատոյց լինի միոյն հազարապատիկ աստ եւ ի հանդերձեալն, զի նա էառ զիս իւր արապան, եւ բազում երախտիս եցոյց ինձ մինչեւ ի Ստմալու անարժանիս :

Եւ անտի հասաք երկու օրն խասապայ մի ՎԱՍԱՆՎ անուն. եւ կար անդ եկեղեցի մի փայտէ, քահանայ մի եւ քսան տուն Հայի : Եւ օրուկէսն կացեալ անդ՝ հասաք ի ՊԱՆԱՏ. եւ սուրբ Աստուածածնի Փոխման օրն անդ արարաք, չորս օր յամեցեալ անդ : Քանզի սովորութիւն այսպէս էր, որ խաղնան ամէն քաղաք երկու երեք օր պիտէր կենար. բայց կերակուր եւ ըմպելին իւրեանց եւ զբաստուցն ամէն տեղ պիտոր տային :

Եւ անտի երեք օրն հասաք ի ԿԱՆԱՍ. որ էր վերջն Պողոտանաց երկրին եւ մուտ ի թուրքաց աշխարհն : Եւ այս Կալասուս առջեւոյն երթայր սրընթաց ահազնատեսիլ, մեծ եւ ծովաման գետն թունայ, սոսկալի եւ բազմաց զարհուրելի, լայնատարած եւ անդրնդային, մարդակուլ եւ արենարբու :

Եւ Օգոստոսի ԻԲ., օրն կիրակի, անցաք զայն անհուն գետն. եւ երկուշաբթին յայն կոյս անցեալ մտաք ի գեղջուկ մի ՄԻՋԻՆ անուն : Եւ անդ կացաք երեք օր. եւ անդ առնուին զթուրքին կօմրուկն : Եւ չուեալ անտի երկու օր ու կէսն եկաք ի ԽԱՐԱՍՈՒՎՆ խասապայ : Եւ Օգոստոս ԻԶ. մտաք ի ՊԱՉԱՐՆՁՈՍ : Եւ անտի երկու օրն հասաք ի ԲՐԱՎԱՏԻ : Եւ այս քաղաքս էր ի մէջ երկուց բարձր լեռանց, զոր ոմանք ի քաղաքացոցն ասին մեղ, թէ յառաջն ծով էր այս վայրքս. եւ հաւանելի էր բանք նոցա լսողաց, զի եւ

41 եաչիք : — 64 յանդընդլային :

տեղիքն զայն յայտ առնէին : Եւ կային անդ յոլով Հայք անով. ունէին եւ ժամատեղ մի տնակ. երկու էրէց, մին հարեղայ կայր :

Անտի եկաք ԵՆԿԻ ՔՅՅԸՆ. եւ օթեցաք 80 ի Չանկին : Եւ ընդ առաւօտն սկսաք անցանել զՊԱՆԱՍՆ : Եւ այս Պալխանս յոյժ նեղ եւ զժուարին էր եւ քարուտ ճանապարհ երկու լեռանց միջով. ապա այնպէս ճանփան սարք էր, որ հազիւ արատան անցանէր : Եւ այս լեռանց միջովն երթայր գետ մի ոլոր եւ ծուռ. եւ մին օրն զայս ջուրս անցաք քսան եւ վեց անգամ : Եւ երեք օրն հասաք ԱՅՏՍՊԻ. ո՛չ վասն հեռաւորութեան, այլ վասն զժուարութեան ճանապարհին : Եւ անցեալ 90 զՏԷՂԻՍՈՐՄԱՆՆ՝ հասաք ԽՐԻՔԻԼԻՍՍԱՆ, որ էր զարմանալի շէնք. եւ էին բուսածու վէճք մեծամեծք, որ եւ տներն ամէն ի վիմէ կոփած էր. եւ բուն սարուձորն որպէս ծառս եւ անտառ բուսել էին ահագին վէճք : 95

Եւ անտի երեք օրն՝ Մեպտեմբեր Ժ. հասաք ի մեծահամբաւ հռչակաւոր, ծովահայեաց եւ կայսերանխառ մայրաքաղաքն Բուզանտիա, որ է Կոստանդնուպօլիս եւ այժմ կոչի ՍՏԱՄՊՈԼ, առ ցանկալին ամենեցուն : Ապա հազար աւաղ զբարախտ եւ անաջող տալէհիս իմոյ, որ չժամանցի Մարայ կէմոցն, որ գնային յերուսաղէմ. վասն որոյ զբուն ձմեռն անդ մնացի. զի ցամաքով ճանփան կապ էր, եւ ահ կայր ի Պարսից : 105

3. ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍՈՅ

Եւ կայր Ստամպուլ հինգ եկեղեցի Հայոց. ի Վլանկայ երեք, աւազն Սուրբ Նիկողայոս, Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Սարգիս. ի Պալասն մէկ. եւ ի Սուրբամաստրն մէկ, Սուրբ Գեորգ անուն : Եւ կայր չորս հինգ վարդապետ Ստամպուլ. երեք եպիսկոպոս. հարիւր քահանայ կամ այլ աւելի. թող զհարեղայսն : Եւ ութսուն տուն՝ տուն տեղացի հազիւ գտանէր. բայց եկն եւ զարիպն աւելի քան զքառասուն հազար տուն ի Ստամպուլ, 10 Ղալաթա եւ Սկուտարն : Քանզի յօթեակախան ճէլալիքն աւիրել էին. եւ ամենեքեան հալածեալք եւ փախուցեալք անդ էին հանդուցեալք : Եւ թէ հաշուես ի Պողոտանայ մինչեւ Ստամպուլ, պութուն Ուոսմէլին մինչեւ մեծն 15

80 յօթեցաք : — 83 դժարին : — 85 յանցանէր : — 90 զժուարութեան : — 92 փուսածու : — 14 հաշուեն :

Վանատիկ, նա չկայ քաղաք, զեղ կամ չՖալիկ, որ հայ չկենայ. որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս զիտի. փառք Աստուծոյ :

Եւ էր պատրիարզն Հայոց վարդապետ մի Կեսարացի Գրիգոր անուն, խրթնազղի եւ խստակրօն, առաքինի եւ սրբամեալ, յոյժ իմաստուն եւ հմուտ Հին եւ Նոր Կտակարանաց, ճգնող եւ պահեցող. որ բնաւ ամենեւիմբ չուէր միս եւ զինի ոչ ըմպէր, այլ նեւիմբ չուէր միս եւ զինի ոչ ըմպէր, այլ չորարաք զամենայն առուրսն իւր անցուցանէր, բայց միայն ի շաբաթ եւ ի կիրակէն լուծունէր ի երեզ եւ ի պանիր, ի ձուկն, ի ձէթ եւ ի ձու. եւ յաղուհացան երկու օրն անգամ մի ճաշակէր : Առ որ կացի ես կէս տարի մի : Եւ ունէր սա Զուղեցի աշակերտ մի բանասէր՝ անունն Մովսէս, յոյժ խոնարհ եւ հեղ, առաքինի եւ սուրբ, կոյս եւ ընտիր. որ օր մի առանց ութ կանոն Սաղմոսի ոչ անցուցանէր. եւ ժամ մի դատարկ ոչ լինէր. այլ զցայդ եւ զցերեկ հակէր եւ աքնէր յաղթանձիր ոտնակնցութեամբ. եւ պարսպէր միշտ ընթերցմամբ սուրբ Գրոց : Առ այսպիսի աստուածահաճոյ արս կացեալ :

ՍՈՒՐԲ ՍՈՓԻՍ

Օր մի խնդրեցի զոմն քաղաքացի եւ զնացաք ի միասին ի տենչալին ամենեցուն Սուրբն Սոփիա. եւ տվեալ կաշառ շինեալուն՝ մուծին զմեզ ի ներս : Եւ տեսեալ զմերուն՝ մուծին եւ զվայելչութիւն տաճարին, զլայծութիւն եւ զբարձրութիւն, եւ հիացեալ նութիւն եւ զբարձրութիւն, եւ հիացեալ փառս տվաք Աստուծոյ. զոր ոչ երբեք տեսաք ուրեք այնպիսի շինուածք : Այլ եւ տեսաք ի նմա բազում զարմանալի սիւնս մեծամեծս, զանազան մարմարիոնեայ երկայնս եւ միջակս, ազղի ազղի ստուար եւ նուրբ, զեղեցիկ ի տեսութիւն աչաց. ոմն կարմիր, ոմն սպիտակ իրրեւ զձիւն, ոմն լուրջ եւ ոմն կանաչ, ոմն սև եւ ոմն ծիրանի. եւ այլքն խէտուածէա. իսկ կէսքն խէտուածէա կոփած եւ քանդակած զժուար իմն կապուածովք : Եւ զփորվածքն լցեալ ոսկով եւ լաճվարով : Եւ զիտրվածքն լցեալ ոսկով եւ վայելէ գեղջիկութիւն արվեստին : Եւ կայր սիւն մի մեծ ի մէջ տաճարին եւ մարդաչափ մի պատած էր զինքն յերկրէ, զբոլորն սպետրով,

19 յերկրի : — 20 պատրիարզն : — 21 կեսարեցի : — 31 սայ : — 39 այրս : — 42 սոփիայ : — 46 երբէք : — 47 ուրէք : — 54 կորած :

զոր հանապազ քրտունք հոսէին ի նմանէ ակներեւ ամենայնի : Եւ դտաք ի գրոց, որպէս պատմի, թէ անդ են նշխարք սուրբ Լուսաւորչին եւ Գրիգորի Աստուածարանի : Եւ հարցի ես թէ վասն է՞ր է պատեալ սպետրով. 65 ասնն սպասաւորքն, թէ վասն բազմամբոս ժողովրդոց, որք դան աստ, տաճիկք եւ քրիստոնեայք, արք եւ կանայք. եւ ճգեալ զձեռս առնուն զքերտն եւ զփեն յերեսս իւրեանց. վասն այն ի բազում ձեռաց հաշեալ 70 եւ մաշեալ էր սիւնն երկու երեք մաս. եւ գայն սպետրն արարեալ էին պահապան սեանն, զի մի ի սպառ մաշեցի :

Եւ խնդրեցաք որ հանին զմեզ ի վերնատունն. քանզի երեք տապալայ էր մինչեւ ի զմպէթն : Եւ բացեալ զբուռն ելաք ի վեր հարիւր աստիճան մինչ ի միջին տապալան. եւ անտի եւս հարիւր աստիճան մինչ ի վերինն : Եւ ամէն տապալայ այնպէս մեծ էր, որ թէ երեսունհազար հողի մտնէր յինքն՝ 80 որ ոչ լցվէր : Այլ եւ տեսաք զարմանալի իրս ոչ լցվէր : Այլ եւ տեսաք զարմանալի երարվեստից. կայր յարեւմտից կողմանէ երկու տափակ քար մարմարիոնեայ, որ լոյս տային, զոր տաճիկ լեղուաւ եանար տաշ կոչէին : Տեսաք անդ զտնօրինականքն Քրիստոսի նկարեալ. այլ եւ զպատկերս ամենօրհնեալ Կուսին Մարիամու, նաեւ սուրբ Առաքելոց, Մարգարէից, Հայրապետաց եւ այլ սրբոց, զոր անօրհնքն եղծեալ եւ աւիրեալ էին, որ միայն նշմարանքն երեւէին : 90

Եւ այլ յառաջ զնացեալ՝ տեսաք պատվար, եւ ի միջին՝ դուռն մի սպիտակ մարմարէ, որ ի վերայ նորա կոփած էր զՔրիստոս եւ զՆիկողոսասն առաքեալս. զոր եւ զնոսա քերած էր եւ եղծած : Եւ մտեալ յայն դուռն ի ներս տեսաք զերեզման մի. զիւր չունէր, բայց միայն երկու խաչ : Եւ հարցի թէ ո՞ւմ է. ասին թէ Կոստանդիանոսի թապաւորի. այլք թէ շինօղին է սորա : Եւ անտի ելաք յիսուն աստիճան մինչ վերին առաստաղն : Եւ կայր չորս կողմանէ պատուհան, յորոց քաղաքն որպէս ձու երեւէր : Այլ եւ տեսաք բազում շէնս եւ բան, զորս ոչ կարեմ գրել մի ըստ միոջէ, վասն չճանձրանալոյ ընթերցողաց եւ լսողաց : Եւ իմ զայս ամենայն տեսեալ՝ զոհութեամբ փառս ետու Աստուծոյ, որ զիս զանարժան բազմամեղս ար-

80 ինքն : — 82 յարվեստից : — 86 ամէնօրհնեալ : — 89 աւիրել : — 98 Կոստանդիանոս : — 105 ընդերձուցայ :

ժանի արար տեսոյն Սրբոյն Սոփիայ, զոր տամ հազար երանի շինողաց եւ շինել տվողաց. զի ո՞ր բերան կարէ գովել կամ պատմել զնորա շէնքն, կամ զծախսն ընդ գորով արկանել, կամ զգեղեցկութիւնն պատմել:

Արդ ո՞րպէս գովեցից, զիս՞րդ մեծարեցից եւ ո՞րպէս կամ ո՞ւրմանեցուցից զԱյսեա Սօփիան, ես որ յիմար եւ տկարս եմ ի մէջ ամենայն կարգաւորաց. զի շինեալ է ի սուրբ թագաւորաց եւ օրհնեալ ի սուրբ հայրապետաց, փառաւորեալ ի հրեշտակաց: Որ եւ ընկալաւ յինքն զՅԺԸ հայրապետս Նիկիոյ եւ զՃԾԾն. որ պատվեցաւ ի նոցա սրբութենէն: Արդ որպէս պարծի մեծն Հոռոմ Պետրոսիւ եւ Պողոսիւ, նոյնպէս մեծս Կոստանդնուպօլիս տիեզերաւոյս եւ աստուածարան վարդապետօքս՝ Գրիգոր Աստուածաբանով եւ Յոհաննու Ոսկեբերանիւ: Նաեւ այլ բազմահաւաք եւ յոգնախումբ նշխարս ունի յինքն ամփոփեալ, իբրեւ զգանձս պատվականս եւ զանգին մարգարիտս:

Որ եւ մեծամեծ սքանչելիս առնէ սուրբն Սոփիա մինչեւ ցայսօր. զորս ի բաղմաց զմինն ասացից որ ի ժամանակս իմ եղև: Որ ի թվին ՌԾԸին հրամանաւ կայսեր ելին ճարտարքն ի Սուրբն Սոփիա մէրէմէթ եւ նորոգուան առնել: Եւ մի ոմն ի նոցանէ ունելով կարիս, յուրացեալ ոչ էջ ի վայր, այլ ի աման կրին միզեաց. եւ զայն խառնեալ ի կեր կամէր ի գործ անել: Զոր Սուրբն Սոփիա ոչ հանդուրժեալ անօրէն գործոյն, այլ իսկոյն վերացուցեալ ընկէց զնա անօթովն յերկիր, ահնեբեւ ամենեցուն. եւ մարմինն բազմամասն եղեալ անկաւ յերկիր, իբրեւ զգէշն Սիմոնի Կախարբի: Եւ որք տեսինն՝ երկեան երկեղ մեծ: Մինչ զի համբաւն ել առ թագաւորն, որ հիացեալ փառս տար Աստուծոյ. եւ հրաման եհան, զի մի ոք այլ այնպիսի յանդուզն եւ լիրբ գտցի, այլ եթէ ոք ունիցի կարիք, իջցէ վանդակաւ ի վայր. այլ եւ սրբութեամբ եւ երկիւղիւ ծառայել նմա: Եւ այս հրաշս զբազումս զարմացոյց, զոր մեք աչօք ոչ տեսաք, այլ լուաք ի պատվաւոր արանց Հայոց, Հոռոմոց եւ Տաճկաց որ անդ գործէին. նաեւ ի քահանայից: Եւ այս գործեցաւ ի փառս եւ ի պատիւ ամենասուրբ

Երրորդութեանն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն սրբոյ, ի պարծանս քրիստոնէից եւ ի պատիւ ուրացողացն եւ ոչ պատվողաց զսուրբան Աստուծոյ: Բայց վա՛յ եւ եղուկ մեղսամակարթ թշուառ անձին իմոյ. զի վասն անարժանութեան քրիստոնէից եւ մեղաց մատնեաց Աստուած զսրբութիւնս իւր ի ձեռս այլազգեաց:

ԱՍԼԱՆԵԱՆԱ

Եւ անտի ելեալ քայլ մի քանի առաջ, տեսաք եկեղեցի մի մեծ, փառաւոր եւ գմբէթաշէն. եւ մտեալ ի ներս՝ տեսաք զի դեռ եւս երեւէին նկարք սրբոց պատկերաց եւ աւազ խորանն մեծ եւ լայնանիստ. եւ ունէր մատուռք բազում մեծ եւ բարձրաբերձ, զոր այժմ զազանաց տուն են արարեալ եւ տաճկերէն Ասլանխանայ կոչեն, զոր արկեալ են ի ներս բազում եւ ազգի ազգի զազանս, եւ կայր ամէն մատուռուան ազգ մի զազան. այլ եւ առիւծ, ինձ, ծովային կատու, վաշախ եւ այլն: Զայն իբրեւ տեսի ես՝ յարտասուս հարեալ յոգոց հանի եւ ասեմ. Տէր իմ ընդէ՞ր մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, եւ պղծեցին զտաճար սուրբ քո: Ընդէ՞ր քակեցեր զցանկ սորա եւ հայհոյեն զսա անցաւորք: Ապականեցին զլա խոզք եւ երէք վայրիք. եւ պատառոզ զազանք արածին եւ կերակրին ի սմա: Եւ զսեղանս քո կործանեցին եւ մեք եղաք ծաղր եւ այսն կատականաց, այլ եւ նախատինք զբացեաց մերոց. եւ ոչ ոք է որ պատվէ կամ նորոգէ զսա: Եւ զարձեալ յարեւելս կոյս ասեմ. Տէր Աստուած զօրութեանց, զարձ հայեաց եւ տես. այց արա՛ այգոյս այսմիկ եւ զարման. զի սա է հարսն քո եւ մայր մեր, զոր պսակեցեր պատվական արեամբ քով սրբով. եւ փառօք զարդարեալ պճնեցեր եւ տուն ազօթից կոչեցեր: Եւ ընդէ՞ր ես ոչ կորայ կամ մեռայ, քան թէ տեսի այսպիսի աղէտ զառն կսկծանաց աչօք իմովք: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ. զիս՞րդ այժմ անարկեալ եւ զսրովեալ յանօրինաց է. եւ զու զիս՞րդ լուես եւ համբերես: Եւ ի միտս իմ երկրպագութիւն մատուցեալ Աստուծոյ՝ տրտմութեամբ ելի ի նմանէ: Եւ ասին թէ այս եկեղեցիս կուսանաց վանք էր:

ԱԹ ՄՕՅՏԱՆ

Եւ կայր այս եկեղեցոյս առջեւն մեծ մօյտան մի, զոր Աթ մօյտան կոչեն. եւ էր անդ 171 այլ եւ այլ: — 177 յէրէք: — 185 յայգոյս յայսմիկ: — 194 յերկրպագութիւն:

114 նմանեցուցիչ: — 118 գոր եւ: — 120 գոր: — 125 սակիբերանիւ: — 129 գոր եւ: — 130 սոփիայ: — 133 սոփիայ: — 139 ընկեց: — 144 գոր: — 151 անդր:

սիւն մի մեծ եւ բարձր՝ կանգնեցուցած միափերթ մարմարիոնէ ի վերայ ուրիշ սեան, հաստատեալ ի վերայ չորս պղնձէ առիւծու. հնարիւք եւ բազմիմաստ հանձարիւք զահագին սիւնն հանած էր. որ տեսողացն էր հրաշայի: Եւ բնաւ չաւտայ մարդ, թէ զայն հոգածին մարդու է շինած, այլ թէ դիւաց կամ քաջից սահմանած. բայց զբաժ էր հոռոմի եւ Փոսանկի գրով, թէ մէկ վարդապետ մի Փէնտով է հանել զլա: Փառք Աստուծոյ. ամէն: Եւ քայլ մի քանի այլ առաջ դնացեալ տեսի օձ մի պղնձէ երեքդիւսեան, բարձրութիւն երեք մարդապոյ, իսկ հաստութիւն՝ զիրկ մի, որ պատեալ էին զմիմիտմբ: Եւ հարցի թէ զի՞նչ է պատճառն. եւ ասին թէ այս ալիս է՝ իմաստնոցն հնարեալ. քանզի քաղաքս այս յոյժ օձուտ էր, որ բնաւ ամենեւին մարդ չկարէր աչք բանալ. վասն այն պայս օձս բարձրացուցին եւ իսկոյն կորեան եւ ջնջեալ սատակեցան օձքն եւ այլ ոչ եւս երեւեցան: Ըստ օրինակի Մովսէսի ի հին օրէնքն որ օձիւ սատակեաց զամենայն օձան, որպէս ասէ Քրիստոս, թէ Որպէս բարձրացոյց Մովսէս զօձն յանապատի:

ԽՕՆԹՐԱՐԻՆ ՍԱՐԱՅ

Եւ նետաձիգ մի այլ առաջ տեսաք սիւն մի բարձր եօթն մարդապոյ՝ մեծամեծ վիմօք պատած, առանց կրի. եւ է անշարժ ի հիացումն եւ ի սքանչելիս ամենայն մարդոյ: Եւ մերձ սոցա Խօնթքարին սարայ, որ էր մեծ քան զքաղաք. եւ երկու երեք տակ պարուշէ ունէր, եւ յերրորդումն ապա էր բնակութիւնն:

ՄՕՅՏԱՆԻ

Եւ ով կարէ մի ըստ միոյն գրել զամենայն զմօյտաննուն ընդարձակութիւնն, չէ՛ մանին, մուտպախնին, փայտից տեղն, պալթաճոց. եւ միւսն պարտէզնի, պօստանի եւ պօստանձիք, աճամ օղլանի, ճէպաճիք:

ՃԵՄՁԱԵԱՆԱՅ (ՀԻՆ ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆ)

Եւ կայր սարայն մեծ եկեղեցի մի գմբէթայարկ, որ էր պատրիարքարան Յոհանու Ոսկեբերանի, զոր ասին թէ անդ է սուրբ մարմինն նորա: Զոր այժմ ճէմգախանայ են արել. եւ միայն մատուռ եւ գմբէթն է մնացել. եւ զայն եւս կամէին քանդել եւ աւերել, զի մի

199 միաբերթ: — 203 գոր: — 221 որպէս Մովսէս: — 232 չէ՛մանին: — 238 սակեբերանի:

երեւեցի թէ եկեղեցի է. եւ ոչ կարացին, զի ամենեցուն ձեռքն դօսացան ի հրաշից փառաց սրբոյն եւ երեսքն յետս զարձան. վասն սրոյ զլջացան եւ երկիւղիւ սահմանեցին, զի անդ զցայց եւ զցերեկ վատման մնացեն ի պատիւ սրբոյն:

ՏԻՒԱՆ ԽԱՆԱՅ

Եւ անտի առաջ Տիւան խանայ է, ուր նստին վազիրքն եւ փաշանին. անդ ժողովին հազարք հազարաց պարոնտաք, չափուչի, զայիմնի եւ այլ խառնիճաղանձ, այլ եւ այլ ազգ եւ ազինք: Եւ տիւանին վէրեան կայ զարպաս մի ազնիւ եւ յոյժ գեղեցիկ, որ մուշապարն ի վար հայի նա ի տիւան անդր եւ անտի տեսանէ զամենայն. բայց զնա ոչ ոք տեսանէ: Եւ ունի զարպասն այն երկու բարձր խուպայ, վրան ոսկէջրով օձած. եւ բոլորն՝ սէլիք վայելուչք եւ ծառք անման. եւ ջրաղարձք զոր այլ տեղ մարդ չէ տեսել ամենեւին: Եւ քօշքն մեծ հուպ ծովուն, զարմանալի: Անտի զնացաք ի տուն:

ՆՈՐ ՊԵՂԵՍԱՆ

Եւ այլ օր երթեալ մտաք ի պէզէստան, քանդի երկու էր. մինն՝ հին, միւսն՝ նոր: Նախ ի նորն մտաք. բայց աչք հազար պիտէր, որ տեսանէր եւ վայելէր զեկեղեցկութիւն կուճաշից եւ գանձուց ոսկոյն եւ արծրութիւն եւ մեծագին դիպակնուն, ազգ եւ ազգ սուլահուն, անգին վահանից եւ պողովատ թրից, ահամբ ընդելուզած խանչարնին, աղնիւ աղեղանց, զուտր ոսկով կամ ճօհար կոթով զանկնուն, թող զսէրասէրքն՝ աթլան, մարմուրն, քեամխան, խութիքն, ազգի ազգի ալաճա զաֆղանի, սօֆեր, եաղմուրլուխնին, խըյմաթի քարեր, մեծամեծ մարգարիտք, ահունք պատվականք եւ այլ բազում անտես եւ անգիւտ դօհվանի, որ յաշխարհս ոչ գտանի, անդ լի եւ առատ դտանի եւ ծախի. եւ զինչ մաթահ կամի ոք անդ գտնու: Եւ ունէր սա չորս դուռն. մէկն ոսկերիւք, եւ զարնիշանձիք եւ այլ արվեստաւորք հմուտ եւ ճարտարք, որ այլ երկիր բնաւ չգտանի: Զի զամենայն ինչ զոր մարդ զմտաւածէ, կամ սրտէն անցնէ, անդ առ նոսա դտանէ: Այլ եւ զմրուխտք, լալ հաւկթաչափ

244 յերեսքն: — 253 ոյժ: — 268 պողովատ: — 270 աղեղանց: — 276 գոր:

285 Եւ արժանէ գէղերնի, դաւաթնի, եւ չի դիտէ մարդ զորն գնէ կամ յորն հայի:

ԵՍԱՐԻ ՊԱՋԱՐ

Երկրորդ դուռն Եսարը պաղարն է, ուր բազում քրիստոնեայք գերիք ազգ եւ ազգ: Որք ծերքն են եւ պառաւք՝ նստել են: Իսկ 290 զաղջկունս եւ զմանկունս, զտղայս եւ զաղվորերես կանայս տէլլարնին առեալ ի ձեռս զնոսա՝ շուր անէին եւ ծախէին որպէս զձի եւ զճորի: Եւ զայլս ժողովեալ ի տեղի ինչ կամ ի մօտանի՝ իբրեւ զոչխարս ի փա- 295 բախի: Իսկ գնողքն եկեալ բանային զերեսս եւ զծոցս կոյս աղջկանց եւ զամենայն մարմինս նոցա շօշափէին յոտաց մինչ ի գլուխ, զի մի քոս, խոց կամ այլ ինչ սպի կամ վէր ունիցին: Եւ նոքա լուռ եւ անմուռնչ կային: 300 Եւ զորս հաճէին՝ գնէին. եւ որոշեալ ի հօրէ, ի մօրէ կամ ի քերց եւ յեղբարց բաժանեալ առեալ տանէին ի տուն: Եւ ես տեսեալ զայս ամենայն աղէտս ցաւաղինս, զոր բնաւ չէի տեսեալ, ցաւաց գլուխ իմ, զողաց սիրտ իմ, 305 խոռովեցաւ անձն իմ եւ ամենայն ոսկերք իմ սասանեցան. եւ ոչ իշխէի հարցանել կամ մերձեալ առ գերեալսն, թէպէտ զլեզուս նոցա գիտէի՝ վասն ահի Տաճկաց: Վասն որոյ արտասուաթոր աչօք եւ տխուր դիմօք հայե- 310 ցեալ յերկինս յողոց հանեալ ասեմ. ո՛հ ո՛հ եւ եղուկ տառապելոյս. լաւ էր թէ չէի ծնեալ կամ թէ չէի եկեալ աստ, քան թէ տեսի ես զայսպիսի աղիողորմ խեղճս աչօք իմովք: Եւ ասեմ. Ո՛վ տէր իմ եւ ստեղծիչ, մինչեւ 315 յե՞րբ մոռանաս զմեզ ի սպառ եւ մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո ի մէնջ. ընդէ՞ր մասնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց հեթա- նոսաց, անօրինաց, խտաց եւ ապտամբո- 320 ցեաք, եւ զպատվիրանս քո ոչ պահեցաք, այլ գին եմք անասական արեան քո. զքեզ կարգամք օղնութիւն, զքո նշանդ պատվեմք, եւ զանուն քո անուանեմք. դու զմեզ փրկեա վասն մեծի փառաց քոց: Եւ այլ բազում եւ 325 ազգի ազգի խեղճ եւ ողորմելի բանքեր տեսաք, զի անօրէն Տաճիկքն՝ ազգն Հազարու զբզկին եւ նեղն զազգս քրիստոնէից. եւ իբրեւ ընդ լծով ծառայութեան տատապեցուցանեն եւ չարչարեն, որպէս Եգիպտացիք

292 շուր: — 299 լուր: — 326 տաճիկն: — 329 յեգիպտացիք:

զիսրայելացիսն. որոց Քրիստոս լիցի վրէժ- 330 ինդիր. ամէն:

Իսկ երրորդ դուռն Եօրդանձիք, քիթար- չիք, սիրմաձիք եւ այլ խանութի ազգ եւ ազգ:

Չորրորդ դուռն Փինճան արախճինչիք 335 եւ խաւախչիք: Եւ այլ սահաւ մի յառաջ՝ քարէ մաղաղք, ուր գնող ազնիւ ջուխանի ծախեն, Փոանկի սկէռլէթ, Եթմիշչլա կամ չլա, Էրեղչլայ, մախմուրնի, եւ զանազան ջուխանի եւ այլն: 340

ՀԻՆ ՊԵՋԷՍՏԱՆ

Իսկ այլ օրն գնացաք ի հին պէղէստանն. եւ անդ եւս ազգի ազգի կերպասք, զուժաք, եւ անօթք եւ ձիոց թամք, զանդանաւանդք, լկամք, տիկտիկք՝ արծթէ ոսկէջրած, զալամ քաշած եւ սիրմայ, այլ եւ քարամբք, ախամբք 345 եւ մարգարտով ընդելուզած, գնող եւ անդիւտք, որ այլ տեղ ոչ գտանի: Եւ այլ տեղ չատրճիք եւ չատրնի յոլով եւ մեծաղին. եւ սէլլի աղածէ սնտուկք:

ՍՈՒՂՈՒ ՄԱՆԱՍՏ

Եւ այլ օրն գնացաք ի Սուլումանաստ 350 որ մերձ է Եօթն Ղուլան, ուր կայ Հայոց մեծ Եկեղեցի մի վիմաչէն եւ զմբէթաձեւ, թա- վաւորաչէն, որ կոչի Սուրբ Գեւորք, ի փա- ռաւոր եւ բարձրաւանդակ տեղով եւ ծո- վահայեաց. եւ ասին թէ Կոստաս թաղաւորն 355 որդին Կոստանտինոսի շինել է սվել. քանզի զարմանալի շինուածք էին շուրջանակի՝ զբախտք, պաղչայք, բուրաստանք, այաղ- մաք, պարտէղք, մրգաստանք, եւ ջուրք բա- րէհամ, այլ եւ բազում բնակութիւնք կար- 360 զաւորաց եւ աշխարհականաց, եկաց եւ բնա- կաց: Եւ կայր ի բարձր տեղ զարպաս մի փոքրիկ, որ հայէր ի վերայ ծովու, յոյժ գե- ղեցիկ եւ վայելուչ, ոսկէզօծ եւ զանազան զեղօք նկարեալ եւ յօրինեալ պայծառ. եւ 365 սոջեւ սրճայ մի մեծ թալանլու, սեղանա- տեղ որ ի շօղ ժամու եւ տօթ անդ նստեալ ոք՝ այլ ոչ կամէր անտի գնալ: Այլ եւ եկե- ղեցնայ թիկունքն կայր քարուկիր կամար, նեղ եւ երկայն, նման էտրնու Ալի փաշի, 370 կամ Պուրսու Կէնճիկին. եւ շուրջ ու բոլորն նկարք պատկերաց ՅԺԸ. հայրապետաց եւ ի զլուխն Քրիստոս եւ ամէ Կոստանդիանոս

330 յորոց: — 347 գոր: — 348 յօլով: — 364 ոսկէզօծ: — 368 Եկեղեցնա:

թաղաւորն եւ ձախմէ զչլոյն Հեղինէ որ- 375 դովքն: Եւ ասին թէ աստ եղև ժողովն. եւ այս էր սեղանատեղն Յոհանու Ոսկերբա- նին. իսկ այժմ աթոռ է եւ պատրիարքարան Հայոց:

ԱՎՐԱԹ ՊԱՋԱՐ

Եւ ի գնալն հանդիպեցաք յԱվրաթ պա- 380 զարն: Տեսաք անդ տիբատառ մի յոյժ բարձր. զի գլուխն հազիւ երեւէր, զոր գա- նաղան պատկերք եւ ձիք եւ բանք կօփած էին ի նմա, հիանալի տեսողաց: Կային եւ այլ տիբատառք, բայց սորա նման բարձր 385 չէին:

ԹԱՎՈՒՆ ԽԱՆ

Եւ անտի յոլով գնացեալ եկաք ի Թա- վուխ խանն. եւ անդ եւս կայր սին մի այլ մէրձէրէ, բայց չէր նման Ավրաթ պաղարին. եւ էր պատեալ շուրջանակի յոլով տեղիս 390 պողովատով՝ վասն ամբութեան: Եւ ասին թէ ի ներքոյ այսմ սեանս է Եօթն զամպեղն որ Քրիստոսի օրհնութենէն յաւելաւ հացիւ եւ ձկամբ: Կային աստ եւ անդ բազում եւ ան- ձկամբ: Կային աստ եւ անդ բազում եւ ան- թիւ եկեղեցիք մեծամեծք, վիմաչէն եւ մար- 395 մարիոնեայ, եւ մատուռք. յորս կային նշխարք եւ ոսկերք սրբոց. եւ որք զեղեց- կաղոյնք եւ ի բարձր տեղով էին, զայն ա- նօրէնք խլեալ եւ յափշտակեալ էին. եւ զիւ- րեանց ոչ հաւանեալս թողեալ էին Հոռմոց. 400 զի քաղաքն Հոռմոց էր նախ:

Եւ կայր հարիւր կամ աւելի Հոռմոց եկեղեցի. իսկ Տաճկաց մզկիթ, մէջիթ քանի հազար. նոյնպէս բազնիք, խաներ զարմա- նաչէն մեծ եւ լայնանիստք, կամարակապ, 405 մեծամեծ սայլիւք, եւ մարմարէ խարսխօք հաստատեալ. դռովն մեծ երկաթի որպէս քաղաքին: Կայ խան, որ հարիւր օտառ ունի. կայ երկու հարիւր, կայ որ երեքհարիւր, եւ մէջն շատրվանի եւ ջրեր քաղցրահամ: Նոյն- 410 պէս եւ բաղանիքն մեծամեծք, զմպէթայարկ խուպայիւք իբրեւ զեկեղեցիս. ոմն մարմարէ սպիտակ, ոմն խէտուձէտ քարանց, այլքն շինի սաֆի պատերն, եւ այլքն այլ իմն: Շատրվանք ջրոց եւ գոներ ի նմա յոլով: 415 Սպասաւորք քանի հարիւր ի նմա. նոյնպէս փէշտամալնի, մախրամանի, սրբէք եւ խզմէթնի որպէս մարդ կամի կամ հաճի: Եւ ամէն Աստուծոյ օր կու վառի. եւ թէ մարդ ամէն օր գնայ ի նա՝ ա՛յլ կ'ուզէ:

377 պատրիարքարան: — 390 պողովատով | սախ: — 419 նայ:

Եւ այլ բազում չէնք եւ եարուք տեսաք 420 զարմանալիք՝ հին եւ նոր: Նաեւ սարայնի վէղերնուն, փաշանուն, եւ այլ մեծամեծ ա- զայից, զայիմուն եւ իշխանաց, որ թաղա- ւորաց լայեխ էր:

Եւ ունէր քաղաքս այս ի՛. դուռն. 425 ԺԸ. ի վերայ ծովուն եւ Ձ. ի ցամաքի. զի սպիտակ ծով ովկիանոս բոլորեալ է զբա- զաքն եւ միշտ հարկանէ զպարիսպս նորա: Եւ ի մէկ դուռն Ետի զուլան է. յոյժ ամ- րոց եւ անառիկ. զոր անդ արկանեն զմե- 430 ծամեծ իշխանս, զպարոնայք եւ զխաներն, զորս ձեռքակալ անեն կամ գերեն զթշնա- միս: Եւ անդ դուռն վրայ հանած էր սպիտակ մարմարէ ազգ եւ ազգ մեծամեծ մարդիք: Գնացաք ի Ղատրղալիմանն, Չաթլաղա- 435 բին, Սամաթեան եւ այլ տեղիս: Տեսաք զար- մանալի շինուածք. եւ զետնափորս սալարա- կապս — եւ ասին մեզ թէ բոլոր քաղաքիս ներքեւն այսպէս է եւ ջուր պատեալ — եւ կա- մուրջք եւ չէնք. զորս ոչ կարեմ մի ըստ 440 մուրջք կամ չէնք. զորս ոչ կարեմ մի ըստ միոջէ պատմել կամ գրել, զի մի ձանձրա- միոջէ պատմել կամ գրել, զի բաղմութիւն խօսից ցեալ ներհիցէք, զի բաղմութիւն խօսից տաղափութիւն տայ լսելեաց: Զի որչափ կացի անդ, օր մի չկացի ի տան. այլ ամէն օր երթայի յեկեղեցի մի կամ ի չէնք: 445

ՊԱՒՍ

Գնացի Պալատ, որ էր պաղատն Կոս- տանդիանոսի թաղաւորին. որ անդ նստէր յամառն, զի ի բարձրաւանդակ տեղով էր, բարէշունչ օդն: Եւ մերձ նմին կայր եկեղեցի մի փոքրիկ, յոյժ ազնիւ եւ զեղեցիկ, սաֆի 450 օսկով օծած եւ զարդարած. աչք հազար պիտի որ հայի: Թաղաւորն եւ թաղուհին անդ աղօթէին: Յամաքի կօմբուկն եւ Լէհցոց անդր կ'անուն եւ Ուրուսեւու. իսկ Անա- անդր կ'անուն եւ Ուրուսեւու. իսկ Անա- 455 տօլուէն ծովու եղրն, Եմիշ սքալու մերձ: Եւ կայ ի Պալատ եկեղեցի մի. կէսն Փոանկի, կէսն հայի. նոքա ժամ ու պատարազ կ'առ- նեն. եւ Հայք կ'անուն ի միասին սիրով եւ յ խաղաղութեամբ:

ՂԱՒԱԹԻՍ

Եւ յայն կոյս ծովուն Ղալաթիա կղզին 460 է, մեծ եւ ընդարձակ. ունի ԻՍ. Եկեղեցի. Ժ Հոռմի եւ Ժ Փոանկի. եւ մին Հայի՝ սպա յոյժ զեղեցիկ վիմաչէն եւ կամարակապ

427 յովկիանոս: — 429 Ի. Ետի: — 429 ոյժ յամրոց: — 446 Կոստանդիանոսի: — 449 յօդն:

Սուրբ Լուսաւորիչ անուն: Եւ աւազ եկեղե-  
 465 ցին Փռանկի Սան Տօմէնիկ կոչի՝ է մեծ եւ  
 լայնանիստ, որ ի տարին անգամ մի մեծ  
 ուխտ ունին անդ, յաւուր հինգշաբաթով,  
 470 Զատիկէն յետոյ յիններորդում շարթուն. եւ  
 օրն այն մեծ ամբօխ լինի. այլ եւ բազում  
 Տաճիկք եւ քրիստոնեայք, արք եւ կանայք,  
 մինչեւ տնարգելաղջկունք դան, ոմանք ուխտ  
 եւ այլք ի տեսութիւն եւ ի սէյր, իբր ի  
 տօնանմայ: Իսկ պալիօքք եւ էլէիք, որք են  
 475 Թագաւորաց վէքիքք, Փռանցու, Ինկլիզու,  
 Վէնէտիկու եւ այլոց, Ղալաթայ են: Վասն  
 որոյ եւ աղնիւ պատվական դինիք, մուշքէթ  
 եւ մաւմաղի՝ անդ դասնի: Եւ ունին մէհա-  
 նայք մեծամեծք եւ յոյժ բարձր՝ երեք չորս  
 տապալայ, որ Ստամպուլ եւ ծովն կէմէստնով  
 480 առջեւն կ'երեւի իբրեւ զինծոր: Անդ են  
 վայելք եւ հնչողութիւնք եւ ուրախութիւնք  
 մարմնաւոր կենացս բերկրանաց: Այլ եւ ծո-  
 վային ձկունք զանազանք եւ անուշահամք,  
 խայվարք ազգ եւ ազգ, եւ չոր թուխու ձուկ,  
 485 նարինձ, լիմօն, ձէթ եւ ձիթապտուղ լաւ եւ  
 աղնիւն անդ գտանի: Այլ եւ յոյժ բարելի է  
 Ղալաթան: ասեն թէ ի սմանէ եւ ի Մըսրայ  
 լիանայ քաղաքն Ստամպուլ. խաչափառք, կա-  
 490 րէվիտ, միտիայ եւ այլ համեղ կերակուրք  
 անտի ելանեն: Զի թէ այս երկու քաղաքս  
 չէր, սովալուկ լինէր Ստամպուլ ի բազմու-  
 թենէ մարդկան: Զի քսան մղոն է պարսպին  
 բոլորն լայնանիստ եւ ընդարձակ եւ մեծ  
 յոյժ. եօթն մեծ լեռան կայ ի նա, որպէս  
 495 եօթն մեծ քաղաք, հինգ տիքմատաշ, եւ  
 եօթն դուլայ:

ԲՆԱԿՁՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՆ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԻՔ  
 Եւ ասին թէ կայ ի Ստամպուլ ԽՈՒ Հրէի  
 տուն եւ ԽՈՒ տուն Հոմի. ԺՈՒ տուն Հայի,  
 բայց Տաճկաց հաշիւ եւ համար չկայ. ԶՈՒ  
 500 խանութ կայ. ԼՈՒ մէհանայ: Թող զմէջլէթ-  
 նին, հիւրանոցնին, վախֆնին, մէտրասա-  
 նին, ճումայանին, թէմպէլխանանին, հիւան-  
 դանոցնին, աշխանանին, մուտպախնին, պէ-  
 ղզտաննին, սարաճխանն, ախոռնին, մօյ-  
 505 տանին, բաղնիքնին, խաներն, չարչունին —  
 որ ամէն օր ի չարչու մի պազար կու լինի —  
 քահվէխանանին, զաֆաֆնոցնին, զատ սա-  
 բայնուն, պաղչանին, պօղանին — ի վլան-  
 կա պօղան մի կայ, մեծ քան զքաղաք մի

477 անդր: — 486 բարէլի: — 490 անդի: —  
 502 հիւանտանոցնին:

—, չուկանին, չարչունին, եւ փողոցնին 510  
 մարդաշատ եւ ապրանք լի:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԻՔ  
 Եւ այնպէս ողորմած եւ բարերար է ազգն  
 Տաճկաց, որ ամէն փողոցի գլուխ աղբիւր է  
 չինած. եւ շատ ջրի աման դրած, անուշ եւ  
 բարեհամ. դեռ մէջ պաղպաղ ձգած որ եկող 515  
 զնացօղն կու խմէ եւ դիւրի, այլ եւ բազում  
 տեղիս սառն ջուր եղեալ անջրգի եւ անմարդ  
 տեղիս վասն ճանապարհորդաց: Իսկ այլք  
 ուսովն կամ յիշեալ (յէշն) բարձեալ անուն ի  
 շուռ եւ աղաղակեն թէ Վասն սիրոյն Աս- 520  
 տուծոյ սէպիլ ջուր ցուրտ ըմպեցէք. եւ ոչ  
 զուք խտրեն, կապուր կամ հրեայ: Ունին եւ  
 դպրանոցս: Եւ օրն երկու անկամ կերակուր  
 կ'ենէ հիւանդաց եւ հիւրոց: Եւ ոչ միայն ի  
 525 քաղաքս, այլ եւ ի գիւղս եւ յանրնակ տե-  
 ղիս, ի լեւրինս, ի այրս, ի անտառս եւ ի ա-  
 նապատս շինեալ են խաներ, մեծամեծ մէ-  
 ջիթնի, բաղանիք եւ շատրվանք: Դան քար-  
 վանք, իջնուն, երկու հեղ կերակուրն ու-  
 տեն, պաղ ջուրն խմեն, ի բաղանիս ըմպվին 530  
 եւ զնան զճանապարհն իւրեանց. մէկ փող  
 մի չտան:

ԿԱՄՈՒՐՁՔ  
 Դարձեալ ի վերայ գետոց եւ մեծամեծ  
 աղբերաց եւ ջրոց, նաեւ ի տղմուտ տեղիս  
 կամուրջս վիմաշէն կամարակաղ սայլիւք 535  
 յիտուն, հարիւն, կամ այլ աւելի ակնով քա-  
 բուկիր ամբոցիւք լայն եւ ընդարձակ ի վե-  
 րայ անհուն ջրոց դուզեալ են: Ընդ որ ան-  
 ցաննն մարդիք, դրաստք եւ անասունք եւ  
 փող մի չտան, ի յամօթ եւ ի նախատինս 540  
 սուտ քրիստոնէից, որ քանի մն փայտ զնեն  
 ի տղմային տեղիս կամ փայտեայ կամուրջ  
 շինեն եւ յանցաննն բռնութեամբ ստնուն ի 7  
 ճանապարհորդաց երկու դրամ՝ վասն արա-  
 պէնն կամ ձիուն. ո՛հ, ո՛հ: 545

ԱՂՕԹՔ ԵՒ ԾՈՄԱՊԱՀՔ ՏԱՃԿԱՑ  
 Դարձեալ զի են յոյժ աղօթատէքք, որ  
 զհինգ նամազն ոչ թէ ի տան, այլ եւ ի ճա-  
 նապարհս անգամ ոչ թողուն ի բայ, այլ ան-  
 խափան կատարեն զցայգ եւ զցերեկ, նա եւ  
 ի սաստիկ ձմեռն ի վերայ ջրոյն եւ ձեան 550  
 պաղ ջրովն ողողին եւ աղօթեն, թէ եւ յըն-  
 519 յուսովն: — 522 հրէա: — 524 հիւանտանոց:  
 — 534 տղմուկ: — 538 յանհուն: — 544 ճանա-  
 պարհաց ք դրամ արապէն:

կերաց յետ մնան: Ապա վա՛յ ինձ եղկելոյս,  
 քրիստոնեայ գոլով՝ աւուրն անգամ մի գնալ  
 եկեղեցին յուլանամք եւ իբրեւ ի տուգանս  
 555 գնամք. նաեւ ի խաղաղ ժամու յեկեղեցոյ  
 ոչ աղօթեմք, ոչ թէ ի տան կամ ի ճանա-  
 պարհի, որպէս նոքա ուղիղ եւ յօժար սըր-  
 տիւ:  
 Պահեն եւ պահս երեսուն օր, զոր ոամա-  
 560 դան կոչեն, ըստ Հրէից եւ Ասորոց ծոմ կե-  
 նան զօրն եւ իրիկունն լուծանեն ի միս եւ  
 այլն՝ ի պարարտ կերակուր. եւ այնպէս  
 մինչ ի լոյս ազահ ուտեն երեք չորս անգամ,  
 զի քնանան, զարթունն եւ դարձեալ ուտեն:  
 565 Զգինին հարամ ասեն եւ ոչ ըմպեն. եւ ար-  
 բեցութիւն ընաւ չկայ առ նոսա: Ունին եւ  
 այլ բարէգործութիւնս, դատաստան եւ իրա-  
 ւունք, զաքաթ եւ ողորմութիւն, թէպէտ  
 այժմ բարձեալ է այս ի նոցանէ, որպէս եւ  
 570 ի քրիստոնէից:

ԽՆԱՄՔ ԱՆԱՍՈՑ  
 Այլ եւ հոգ տանին անասնոց, զազանայ  
 եւ թռչնոցն: Կայ մեծ մէջլիթ մի Ղարամանն,  
 այն որ յԱյլուն, քանի տեղ քաղապնի խո-  
 բովեալ՝ արկանեն շանց եւ կատվից որ տէր  
 575 չունին. այլ եւ աղաւուրց եւ այլ թռչնոց, որ  
 սովորեալ ի ժամն այն՝ զան ժողովեալ երա-  
 մով առ ի ուտել:

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՆ  
 Եւ այնպէս մեծ է Ստամպուլ, որ թէ կրակ  
 ընկնի տանն հազար, քսան հազար տուն  
 580 այրի՝ չի գիտեն, այլ հարցանեն թէ ո՛ր  
 Եւ որչափ ճանփա կայ Ստամպուլայ, ամէն  
 ճանփայ վեց աւուր ճանապարհ է, գետինն  
 սաւարակաղ, որպէս մինչեւ էտրնան եւ այլն:  
 585 Այլ եւ ամէն տեղ աղբիւր, չէ՛մայ. եւ եա-  
 սախիք, զաֆտալիք, զի մի վիսա լիցի կամ  
 կուր:

ԿՐՕՆ ՏԱՃԿԱՑ  
 Աստուած ասեն. եւ գերեքանձեայ աս-  
 տուածութիւնն ուրանան՝ զչայր, զՈրդի եւ  
 590 զՍուրբ Հոգին. թէ եւ ի գիրս իւրեանց ու-  
 նին եւ յարապ լեզուս դաւանեն զԵրրորդու-  
 նին եւ յարապ լեզուս, վալահ, թալահ, եւ  
 թիւնն ասելով. ալլահ, վալահ, թալահ, եւ  
 ոօհ, զոր գրած է ի գիրքն Հարցմանց. այլ

563 յազահ: — 564 գնանն: — 567 զազանայ  
 յիւրաւունք: — 569 յոյժմ: — 573 աւուրն խորովեալ:  
 — 574 զոր:

Եւ գտցես ի պատասխանին Մատթէոսի  
 վարդապետի ընդդէմ Տաճկաց: Այլ եւ 595  
 զԳրիստոս ոչ դաւանեն, այլ մարգարէ. եւ  
 չորս գիրս ընդունին՝ զԱրարածքն, զՍաղ-  
 մոս, զԱւետարան. բայց չորրորդ որ իւրեանց  
 Մէհմէտին է՝ Ղուրան կոչեն, եւ զայն առա-  
 ւել պատվեն քան զայլսն: 600

ՀԱՆՌԻՍԱԿԱՆ ՁՈՒ ՍՈՒԼՔԱՆԻՆ  
 Պատմեցից ձեզ սակաւ մի վասն խօնթ-  
 քէրին սալթանաթով զնալն ի ճումայաթն:  
 Գնանդ ամէն ուրբաթ, զոր նոքա ճումայաթ  
 կոչեն, պիտ' որ գնայ նախնի Թագաւորաց  
 չինած ճումայանին. ապա այլ ստէպ եւ ի 605  
 Ժիւր Այա Սօֆին երթայ, մեծ սալթանաթով  
 եւ ամբօխ, զօրօք եւ հեծելօք, իշխանօք  
 եւ մեծամեծօք, զարդարեալ եւ պաճուճեալ,  
 զբեհաւորեալ եւ սուր ընդ մէջ անեալ պատ-  
 րաստութեամբ իբրեւ ի պատերազմ, մինչ 610  
 զի ամենայն քաղաքն շարժի եւ զդրդի գնալ  
 ի տեսութիւն նորա. եւ հազարք հազարաց  
 ի լցվին ի փողոցնին, ուստի գնալոց է: Եւ  
 նախ եկել շարիքն զան եւ շարին երկու կողմ  
 դռան արքային, երեք, չորս հարիւր մուճա- 615  
 վազանին ի գլուխս, եւ զայլն այլ եւ այլ. զի  
 ոմանց քէչան սպիտակ է, առանց արծաթի.  
 ոմանց դեղին. ոմանց մուճավազան ոսկէ-  
 ջրած, ոմանց եւ ակամբք ընդելուզած: Եւ  
 յորժամ Թագաւորն շարժի, սոքա ընդառաջ 620  
 գնան թէ ի պատերազմ եւ թէ յայլ տեղ.  
 բայց միշտ հետեալ: Եւ զկնի սոցա սուլախ-  
 նին, զօրվաճիք. ապա եայտաչիքն, ձիա-  
 ւոր՝ ի գլուխսն ունելով թուրուս արծաթի,  
 աղեղք ի ձեռս եւ ի գլուխն ագնիւ ոսկէթէլ 625  
 սօրղուճ: Եւ յետ նոցա ջայլուչք եւ ջայլուչ-  
 պաշիք՝ մեծամեծ տօլպանտով, ոսկիակազմ  
 ձիօք եւ սէրասէր դիպակօք, զուտր արծաթի  
 թամպուլք: Եւ զկնի նոցա սուրհանդակք այս  
 է փայլի՝ հորանի եւ հետեալ, ունելով ի 630  
 գլուխս իւրեանց սաղաւարտ բոլոր իբրեւ  
 գիսաւուս արծաթէ ոսկէջրած: Ապա աղա-  
 նին, զայլինին. ապա փաշայնին. երկու զաղի  
 էսքէրն. զկնի մուֆտին, ապա վէլիբնին,  
 պէտապի եւ արապ ձիօք: Եւ բախտքն ամէն 635  
 մարդարտով եւ ակամբք յօրինեալ. զոր այլ  
 երկիր կարճեմ թէ եւ Թագաւորք ոչ ունին  
 այնպիսի կազմուածք: Եւ զկնի այսր ամե-  
 նայնի դայ մեծ վազիր աղէմն. եւ զկնի Թա-

611 դրթի: — 636 օրինեալ:

640 քառորն հեծեալ ի ձի հրաշարի եւ դարմանալի, զուտր ոսկիակաղմ. իսկ թամքն, տիկտիկն եւ ամենայն բախտքն սափի մեծամեծ մարդարիտ եւ ահամբք զարդարեալ, որ փայլըփայլի տան եւ դաչս մարդկան պշուցանեն. զոր ոչ կարէ մարդ գին դնել կամ զիւրաքն գիտնալ կամ լեզուաւ պատվել զմեծութիւնն անգին խաղնային կամ զճիւղն, որ ոչ գտանին առ այլ թագաւորս: Այլ եւ ունէր ի գլուխն մեծազին տօլպանտ. եւ եր-  
650 կու սորդուճ ի վերայ անգին ճուհարով կաղմած, որ մինն ճՈՒ զուռուչ կ'արժէր: Եւ հուպ թագաւորին յետուս երկու գլխի՛՛՛՛ դար ազնաւուրք, ահագնատեսիլ եւ քաջք, մագերն երեսն ի վայր կախ, ունելով ի ձեռս  
655 պալթայք: Ապա զկնի խաղնատարն եւ խրդլարազան: Եւ որք զկնի եւ զհետ երթան, եւ որք սէյրի կ'անեն՝ աղաղակեն՝ «հո՛ւ, եահո՛ւ»: իբր թէ երկրի աստուած է: Այսպիսի փառօք, պերճ եւ ճոխ փարթամութեամբ  
660 երթայ նա ի նամազն իւր. եւ կոչեն զնա Եէր խալիֆայ:

Եւ ես տեսեալ զայս ամենայն՝ հիանայի ներողութեանն Աստուծոյ, թէ որպէս փառք եւ մեծութիւն է տվել ուրացողացն զնա: Եւ միշտ վարանէի ի միտս իմ, թէ որպէս հասանեմ փախազանացս. եւ զնամ յուրտ եղեալ տեղիս. բայց զի ձմեռն էր եւ ճանապարհներն մեծ տարալուրս:

(Շարունակելի:) Հրատարակեց՝ Հ. Ն. ԱԿԻՆՆԱՆ



**ԵՐԿՐՈՐԳՆԿԱՆ ԿԵՐԳԻ ԸՍՏՈՒՆԵՐԵՐ ԵՒ ՈՐԻՆԵՐ ԵԶՆԻՍԻ ԲՈՂ**

Մեր քով ինչպէս որ հայ հնախօսութիւնն ասոհասարակ շատ քիչ ուսումնասիրուած է, այսպէս նաեւ մասնաւորապէս հայ հին կրօնքն գրեթէ չէ քննուած:

Այն սակաւաթիւ հեղինակները — ազգային եւ օտար — որոնք հայ հին կրօնքով զբաղիլ ուզած են, գրեթէ ամէնքն ալ չնչին նպատակ մը բերած են հայ գիտութեան: Բացառութիւն կը կազմեն սակայն Մ. Էմին,

644 փայլափայլ:

Մ. Արեղեան եւ Հ. Ա. Մատիկեան, որոնք իրենց կրօնաքննական սակաւաթիւ երկերուն մէջ՝ գիտութեան պահանջած մեթոդներով եւ աչալըջութեամբ մերձեցան իրենց նիւթերուն: Չէ կարելի ուրանալ նաեւ Գեղեցիկ արդիւնքներն այս տեսակէտով, որ թէեւ հայ գիցարանութեան միա՛յն բարձրագոյն աստուածութիւնները նկատողութեան առաւ եւ միւս փոքրագոյն աստուածութիւններն ու ոգիներն իր ուսումնասիրութեան չնթարկեց, սակայն իր «Armenische Götterlehre»<sup>1</sup> բովանդակալից է եւ տեսական արժէքներ ունի: Պէտք չէ մեր ուշադրութենէ վրիպի նաեւ Հ. Ղ. Ալիշան. իրեն «Հին հաւատք»<sup>2</sup> իրականին՝ ամէնէն շատ գործածուած գրքերէն մէկն է, եւ այս ո՛չ թէ անոր համար, որ իր նիւթը գիտութեան պահանջներուն համաձայն մշակած է եւ ժԹ. դարու կրօնաքննական տուեալներուն հետ հաշտ կը մնայ, այլ պարզապէս անոր համար, որ հարցին հայող բաւական ատամ նիւթ կուտակած է եւ համադրած:

Յաւալի է սակայն, որ կրօնախոյզ հեղինակները շատ անգամ իրենց ուսումնասիրութեան նիւթ բրած չեն հայ գիցարանութեան երկրորդական կարգի աստուածութիւնները, որոնցմէ շատերը մինչեւ այսօր դեռ դոյ են ուսմէին համաձայն:

Արդի ժողովրդական հաւատքին բազմաթիւ ոգիներուն ստուար մէկ մասը կը նոյնանայ հայ հին մատենագիրներու յիշատակած ազգային ոգիներուն հետ. պարագայ մը, որ մեզի իրաւացի կերպով ենթադրել կու տայ, թէ մեր ժողովուրդի սին հաւատքին ուրիշ ոգիներն ու աստուածութիւններն ալ հեթանոս հայուն պանթէոնի երկրորդական անձնաւորութիւններն էին: Արդէն Եղնիկի յիշած այս կարգի ոգիներն ամբողջութեամբ վերստին կը գտնենք արդի հաւատալիքներու մէջ: Մեր Կողբացի հեղինակը երբեմն նկարագրական բացատրութիւններ կու տայ անոնցմէ ոմանց, որով հնարաւորութիւն կ'ունենանք անոնց համապատասխանող ոգիներն ամբիջապէս գտնել: Բայց երբեմն ալ շատ հարեւանցի են իր նկարագրութիւններն. անոր համար ալ կը ստիպուինք երկարատեւ պրպտումներով եւ հա-

<sup>1</sup> H. Gelzer, Zur armenischen Götterlehre, Sonderabdr. a. d. Berichten der Königl. Sächs. Gesellschaft der Wissenschaften. 1895.

մեմատութիւններով գտնել այդ հարեւանցի կերպով նկարագրուած ոգիներու զուգորդներն: Արդ այդ ոգիներն են. արալէզ, շահապետ (վայրայ), նհանգ, յուշկապարիկ, պարիկ, պայ, ծովացուլ, վիշապ եւ այլն:

Արամազդ, Անահիտ, Նանէ, Աստղիկ, Վահագն, Միհր, Տիր եւ ուրիշ աստուածութիւններու մասին շատ հեղինակներ գրած են, եւ սակայն գրեթէ միշտ անտես են ըրած յիշատակուած այդ երկրորդական կարգի ոգիներն: Մինչդեռ իրենց գործին արժէքն զգալապէս կը մեծնար, եթէ անոնց հետ կապուած հարցերն ալ լուծել ջանացած ըլլային: Արդեօք ինչո՞ւ համար անտես եղած է այս կարգի ուսումնասիրութիւն մը: Երկու պատճառներով թերեւս. նախ ոմանք անշուշտ ենթադրած են, որ հայ հին մատենագրութեան մէջ յիշուած այդ ոգիները մաս չեն կաղմեր հայ գիցարանութեան: Իսկ ուրիշ հեղինակներ հարցին հետ կապուած կնճիւղներէն վախցած եւ ընկրկած են: Առաջիններէն պարագան հարկաւ եպիբելի է, իսկ յետիններունը մասով մը արդարացի: Մեծապէս գնահատելի է Հ. Ղ. Ալիշանի ջանքը, որ «Հին Հաւատք»<sup>2</sup> գլխուն մէջ<sup>2</sup> ամփոփած է մեր խնդրին հայող ոգիներու մասին բաւական ատամ նիւթ. «Հրէշք, վիշապ, վիւրազ, վիշապաքաղ, եղջերուաքաղ, առլէզ, համբարու, շահապետք, շուտա, շուազ, պայք, պարիկք, յուշկապարիկք, ճիւղք»<sup>3</sup>: Ուրիշ հեղինակներ այս կամ այն ոգին առանձնապէս նկատողութեան առած են եւ շատ անգամ իրենց նախորդներուն նիւթերն ու կարծիքները պարզապէս կրկնելով գոհացած: Գրութեանս ընթացքին մէջ մի հեղինակի առանձին պիտի անդրադառնամ:

Ուստի եւ ուսումնասիրութեանս նիւթ կը մատակարարեն Եղնիկի յիշած ոգիներն, եւ այն սա կարգաւ. Արալէզներ, շահապետ, յուշկապարիկ, պարիկ, պայ, համբարու, նհանգ, ծովացուլ, վիշապ:

Արալէզներ: — Արալէզ ոգիներու մասին համեմատարար բազմաթիւ են տեսութիւններն, որոնք այլ եւ այլ գրութիւններու մէջ միայն վարկաբարձի կերպով արտայայտուած են: Հարցիս նկատմամբ շատ շահեատուած են: Հարցիս նկատմամբ շատ շահեատուած են ուղղութիւն տուող տեսակէտներով երեւան եկաւ վերջերս Հ. Մատիկեանի

<sup>2</sup> Հ. Ղ. Ալիշան, Հին հաւատք, էջ 168—189:

«Արայ Գեղեցիկը», ուր արալէզները մանրամասն ուսումնասիրութեան մը<sup>3</sup> կ'ենթարկուին: Սակայն Հ. Մատիկեան չէ յիշած նորագոյն աւանդութիւններէն շատ շատերը եւ թեթեւակի զբաղած է Լէզքի խնդրով, որ իրականին մեծապէս արժանի է յատուկ ուշադրութեան, վասն զի առանց ասոր արալէզներու վրայ ո՛ր եւ է ուսումնասիրութիւն թերի կը մնայ միշտ: Ուստի պիտի ջանամ մասնաւոր կերպով Լէզքի խնդրին վրայ ծանրանալ: Ասկից զատ կարելի եղածին չափ ամբողջութեամբ պիտի տամ արալէզներու մասին եղած ուսումնասիրութիւններու պատմականը:

Եղնիկի համաձայն ժողովուրդը «գառլէզն ի շանէ» կը համարէր: Մեր հեղինակն այս եւ նման հաւատալիքներ հերքել ջանալով՝ նոյն տեղը սապէս կը պատճառարանէ (էջ 115). «Մարմաւորի չէ հնար՝ թէ ի շուրս կեցցէ, որպէս եւ ոչ ջրականին՝ թէ ի ցամաքի կեցցէ. եւ ո՛չ ի շանէ ինչ ելեալ, եթէ ընդ աներեւոյթ զօրութիւնս ինչ կեցցէ. եւ յորժամ վերաւոր ոք անկեալ ի պատերազմի զնիցի՝ թէ լիցցէ եւ ողջացուցանիցէ, զոր արալէզն կուչեն. այլ ամենայն ատասպելք են» (115): Եւ սակայն ուսմէի կը պնդէ, թէ մէկը այս ինչ միւսն ալ այն ինչ ոգին աչքերովը տեսած է. «Մի՛թէ եւ զարալէ՞զն եւս կարիցէ ասել՝ թէ եւ զայն ուրուք տեսեալ իցցէ», հարց կու տայ Եղնիկ. «Եւ թէ յոտաջին ժամանակն արալէզք լիցցին զվերաւորս եւ ողջացուցանէին, արդ ընդէ՞ր ոչ լիցցին եւ ողջացուցանիցին (եւ այժմ)՝ ո՛չ սպաքէն նոյն պատերազմունք են, եւ նոյնպէս վերաւորք անկանին: — Այլ յայնժամ, ասեն, զիւցաղունք էին» (116):

Եղնիկի այս տեղիքներուն համար մեծ գոհունակութիւն մ'ունենալու ենք. արալէզներու մասին որոշ գաղափար մը կը կազմենք հոս, պարագայ մը, որ չենք գտներ ծովացուլի, նհանգներու եւ այլ ոգիներու մասին գրած հատուածներուն մէջ:

Ինչպէս յայտնի է՝ Ե. դարուն կենդանի էր գեո արալէզներու հաւատքն ու պաշտամունքը: Փառատոս Բիւզանդացի<sup>4</sup> նկարագրէր զծերով էջ մ'ունի այս հաւատքի մասին, զոր

<sup>3</sup> Դիտ. Հ. Ա. Մատիկեան, Արայ Գեղեցիկ, համեմատական քննական ուսումնասիրութիւն, Վիեննա 1930, Ազգ. Մատեն. ձիջ, «Արալէզները», էջ 107—170:  
<sup>4</sup> Ե. Դպր., 12: